



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ. փոստ kotayk@mta.gov.am

04.02.2014թ. N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ջերմորեն շնորհավորում եմ դպրոցականների առարկայական օլիմպիադաների մեկնարկի կապակցությամբ և մաղթում, որ յուրաքանչյուր աշակերտ լավագույնս ներկայանա այս կարևորագույն կրթական միջոցառմանը:

Պետք է նշել, որ պետական կրթական քաղաքականության առանցքային բաղադրիչ համարվող այս յուրօրինակ ծրագիրը միտված է մեր մատաղ սերնդի գիտելիքների զինանոցի ամրապնդմանն ու մրցունակությանը և սովորողների առաջադիմության բարձրացմանը:

Օլիմպիական մտածողությունն ու գիտելիքները բնորոշում են անձի յուրահատկությունները, արտահայտում վերջինիս բազմաթիվ դրական որակներ ու նպաստում գրագետ անհատի կայացմանը:

Դարձյալ շնորհավորում եմ և ցանկանում ջերմ բարեմաղթանքներ հղել նաև մեր օլիմպիական աշակերտներին դասավանդող ողջ ուսուցչական անձնակազմին, օլիմպիադայի տարածքային և մարզային փուլերի կազմկոմիտեների, ինչպես նաև աշխատանքները վերահսկող և ստուգող հանձնաժողովների բոլոր անդամներին:

Հարգանքներով



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ